նուլ 'ի Նմանէ · գրեաց յայնժամ Երեմիա Չէլէպի թուղթ աղաչանաց առ Յոյն Պատրիարքն, ընդ որում ունէր բարեկամութիւն և ընտանութիւն մեծ · և շահեալ զսիրտ նորա՝ հաստատեաց խաղաղութիւն 'ի մէջ նորա և Մարտիրոսի ։ Եւ եղեւ յետ այնորիկ 'ի չուել Մարտիրոսի յԵրուսաղէմ, հասեալ յԵգիպտոս, հիւանդացաւ եւ վախճանեցաւ անդ եւ թաղեցաւ յեկեղեցւոջ Ս · Մինասայ, այն է Մար Մինա, յաւուրս պահոց վերափոխման Կուսին, յերկրորդ ամի նստելոյ Եղիազարու յԱթոռն Էջմիածնի, և մահ իւր զերծոյց զնա 'ի ձեռաց պարտատեարց իւրոց (1683)։

ԳԼՈՒԽ ԾԱ ·

Պատրիարքութիւն Յովհաննէս վարդապետի ։ Սիմոն Եպիսկոպոս ։ Վէճ Յունաց ընդ Լատինս ։ Հակառակութիւն Լատինաց ։ Նորոգութիւն Ս · փրկչի ։ Գործ Յոյն Պատրիարքի ։ Նեղութիւն այլազգեաց ։ Մահ Յովհաննու Պատրիարքի ։

ՅԵՏ վախճանելոյ Մարտիրոս վարդապետի և անցանելոյ երկուց ամաց, ընտրեցաւ յաթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի, մականուամբ Նօխու–Բճէ կոչեցեալ, աշակերտ Աստուածատուր Պատրիարքի · սա եկեալ յԵրուսաղէմ միաբանեցաւ 'ի վանս Ս · Յակոբայ (1641), և յաջորդեաց յԱթոռ Պատրիարքութեան (1685) ·

Սա ինքնին մատոյց գիր աղաչանաց 'ի Դուռն և էառ զերկուս հրովարտակս 'ի միում ամի՝ ١٠٩٥ (1685) վասն հաստատութեան իշխանութեան իւրոյ · այլ անպակաս էին հակառակութիւնք ոմանց, զի հանապազ նիւթէին նմա չարիս, յընկենուլ զնա յաթոռոյն ։ Տեսեալ Յովհաննու զտհաճ միտս միաբանաց ոմանց, փութաց և վերստին գրեաց գիր աղաչանաց 'ի Դուռն և առաքեաց զայն 'ի ձեռն պատգամաւորի, զի հաստատեսցէ զիշխանութիւն Պատրիարքութեան իւրոյ ցկեանս, որպէս արարեալ էին ոմանք յառաջագոյն · թէպէտ էառ հրձվարտակ ըստ խնդրանաց